# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 31-ԻՑ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 7-Ը ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (Ք.ՇԱՆՀԱՅ) ԿԱՏԱՐԱԾ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**

Նունուֆար Ստեփանյան, ՀՀ ՏԿԵՆ արտաքին կապերի վարչության միջազգային համագործակցության բաժնի պետ

**2. Գործուղման վայրը և ժամկետները**

Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն (ք.Շանհայ), 2024թ. օգոստոսի 31-ից սեպտեմբերի 7

**3. Հրավիրող կողմը**

Ասիական զարգացման բանկ

**4. Գործուղման նպատակը**

Մասնակցություն 2024 թվականի սեպտեմբերի 2-5-ը Ասիական զարգացման բանկի կողմից Շանհայում կազմակերպվող «2024 Asian Evaluation Week (AEW)» համաժողովին:

**5. Քննարկված թեմաները**

Համաժողովի շրջանակներում կազմակերպված նստաշրջանների և պանելային քննարկումների հիմնական թեմաներն էին՝ երկրների միջև գործընկերային կապերի ամրապնդումը, այդ համատեքստում մասնավոր հատվածի դերը Կայուն զարգացման նպատակներին հասնելու գործում, տարածաշրջանային համագործակցության հեռանկարները, ԱԶԲ աջակցությամբ իրականացվող տարածաշրջանային զարգացման ծրագրերի գնահատման կարևորությունը, պարենային անվտանգության ամրապնդումը, համայնքային (գյուղական) զարգացումը, որպես առաջնահերթ ուղղություններ՝ աղետների ռիսկի նվազեցման և կլիմայի փոփոխությանն ուղղված գործողությունների ակտիվացումը, այդ համատեքստում Կանաչ կլիմայի հիմնադրամի կողմից ծրագրային հայտերի գնահատման

գործընթացի նկարագրությունը, Չինաստանի կառավարության կողմից զարգացող երկրների համար կարողությունների զարգացման նպատակով կազմակերպվող դասընթացները և այլն:

**6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Համաժողովին մասնակցում էին շուրջ 200 պատվիրակներ տարբեր երկրներից՝ պետական կառավարման համակարգի միջազգային համագործակցության և ֆինանսական ոլորտների ներկայացուցիչներ, միջազգային կառույցների աշխատակիցներ, անհատ փորձագետ-գնահատողներ և այլն: Համաժողովի մասնակիցների հետ քննարկումներ են եղել տարբեր երկրներում իրականացվող ծրագրերի, կարողությունների զարգացման դասընթացների վերաբերյալ:

**7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Համաժողովի ընթացքում որոշումներ չեն ընդունվել, փաստաթղթեր չեն ստորագրվել: Պայմանավորվածություն է ձեռք բերվել հաջորդ՝ 10-րդ հանդիպումը, կազմակերպել 2025 թվականին:

**8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**

Չինական կողմին առաջարկվել է Չինաստանի կառավարության կողմից կազմակերպվող "Civil engineering" խորագրով դասընթացին ներգրավել նաև ՀՀ ՏԿԵՆ համապատասխան աշխատակիցներին՝ հաշվի առնելով դասընթացի կարևորությունը և այս ոլորտում չինական առաջավոր փորձը: Չինական կողմը փոխանցեց, որ դասընթացներին երկրների մասնակցության ոլորտային առաջնահերթությունները ստանում են տվյալ երկրում հավատարմագրված ՉԺՀ դեսպանատնից, ուստի պետք է դիմել ՀՀ-ում ՉԺՀ դեսպանատուն:

**9. Ստորագրությունը, ամսաթիվը**

Նունուֆար Ստեփանյան 11.09.2024թ.